«Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպումը և իրականացումը» թեմայով վերապատրաստում

2009 թ-ի ապրիլի 6-10-ը ԿԱԻ-ում իրականացվեց ԿԱԻ «ՄԿՈՒԶԱԿ» հիմնարկի աշխատակիցների և անկախ փորձագետների՝ վերապատրաստման դասընթացը: Դասընթացը անցկացնում էր ՄԿՈՒԶԱԿ-ի տնօրենի տեղակալ Աշոտ Սահրադյանը:

«Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպումը և իրականացումը» թեմայով վերապատրաստման նպատակն էր պատրաստել փորձագետներ, որոնք հետագայում իրականացրեցին ՀՀ տարածաշրջանային 12 բազմագործառութային և 7 այլ քոլեջների թվով 545 դասախոսի, արտադրական ուսուցման վարպետի, տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստման դասընթացներ:

Դասընթացի ավարտին արդեն վերապատրաստվածները յուրացրել էին նոր պետական կրթական չափորոշիչները:

Վերապատրաստումները ֆինանսավորվել են ՀՀ ԿԳՆ և ԿԱԻ միջև կնքված 11.03.2009թ N 09060134-1 պետական աջակցության պայմանագրի հավելված 1-ի 3-րդ կետի համաձայն

«Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպումը և իրականացումը» թեմայով վերապատրաստող դասախոսների ցանկը

1. Կիրակոսյան Գագիկ
2. Նահապետյան Ռոման
3. Խաչատրյան Հեղինե
4. Գևորգյան Արմինե
5. Բաբախանյան Տիգրան
6. Կիրակոսյան Լարիսա
7. Սարգսյան Լալա
8. Պետրոսյան Ալվարդ
9. Ուլիխանյան Հերմինե

«Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպումը և իրականացումը» թեմայով վերապատրաստում

2008-2009թթ.-ի ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից մշակվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների 56 պետական կրթական չափորոշիչների նախագծեր ինչպես նաև այդ մասնագիտությունների ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր: Այս փաստաթղթերը իրենց մեջ ներառում են մոդուլային ուսումնական ծրագրեր, որոնցով ուսուցման գործընթացը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կբերի ուսանողների կարողությունների և հմտությունների մակարդակի բարձրացման:

2009թ–ի ապրիլի 15-ից մայիսի 15-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ տարածաշրջանային 12 բազմագործառութային և 7 այլ քոլեջների թվով 545 դասախոս, արտադրական ուսուցման վարպետ, տնօրեններ և փոխտնօրեններ մասնակցեցին «Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպումը և իրականացումը» թեմայով վերապատրաստման 30-ժամյա դասընթացին::

Վերապատրաստման դասընթացի նպատակն էր մանկավարժական համակազմին ծանոթացնելու նոր պետական կրթական չափորոշիչների հետ, աշխատել դրանցով: Դասընթացներն ընթանում էին մեծ ոգևորությամբ, դասախոսները և արտադրական ուսուցման վարպետները տեղում ինքնուրույն կազմում էին մոդուլներ, աշխատում դրանցով և փորձում տալ բազմաթիվ ծագող հարցերի պատասխաններ:

Դասընթացը հաջողությամբ ավարտած անձանց հանձնվեցին ԿԱԻ կողմից տրված համապատասխան վկայականներ:

Վերապատրաստումները ֆինանսավորվել են ՀՀ ԿԳՆ և ԿԱԻ միջև կնքված 11.03.2009թ N 09060134-1 պետական աջակցության պայմանագրի հավելված 1-ի 3-րդ կետի համաձայն

Վերապատրաստումներ իրականացվեցին հետևյալ ուսումնական հաստատություններում

1. Երևանի Ն. Աճեմյանի անվան առևտրի և սպասարկման պետական քոլեջ
2. Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ
3. Եղեգնաձորի պետական քոլեջ
4. Արտաշատի պետական քոլեջ
5. Իջևանի պետական քոլեջ
6. Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ
7. Արմավիրի գյուղատնտեսական քոլեջ
8. Գյումրու պետական ճարտարագիտական քոլեջ
9. Հրազդանի պետական քոլեջ
10. Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ
11. Մարտունու պետական քոլեջ
12. Թալինի արհեստագործական ուսումնարան
13. Երևանի պետական արդյունաբերական քոլեջ
14. Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ
15. Նոր Գեղիի պետական գյուղատնտեսական քոլեջ
16. Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջ
17. Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ
18. Գյումրու պետական տեխնիկական քոլեջ
19. Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ

ԾՐԱԳԻՐ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ »

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 5 ՕՐ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԵԿԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 6 ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄ

N	Թեմաների անվանումը	Ակնկալվող բովանդակային արդյունքը	Ժամերը	
			տեսական	գործնակ.
1	Գիտելիքին միտված ուսումնառության գործընթաց և կարողություններին միտված ուսումնառության գործընթաց: Կազմակերպման և իրականացման առանձնահատկությունները:	Ինչ հիմնական տարբերություններ կան գիտելիքին միտված և կարողություններին միտված ուսումնառության գործընթացների միջև: Ի՞նչ պետք է անել կարողությունների ձևավորմանը միտված ուսումնառություն իրականացնելու համար:	2	
2	Ուսումնառության մոդուլներ: Մոդուլների բովանդակության վերլուծություն ուսումնառության գործընթացում դրանք իրականացնելու նպատակով:	Դասընթացի մասնակիցները ձեռք կբերեն ուսումնառության մոդուլների բովանդակության տարրերի վերլուծություն կատարելու հմտություն, ինչը կարևոր նախապայման է ուսումնառության գործընթացի իրականացման համար: Գործնական վարժությունների միջոցով կկատարվի կոնկրետ մոդուլների բովանդակության վերլուծություն՝ խմբի ներսում ձևավորված ենթախմբերի կողմից և արդյունքների քննարկում:	2	4
3	Դասավանդման և ուսումնառության նյութերի կազմումը ըստ մոդուլների արդյունքների և կատարման չափանիշների:	Մասնակիցները կկարողանան տարբերակել դասավանդման և ուսումնառության նյութերը, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները: Գործնական վարժությունների միջոցով խմբերը կկազմեն 2 դասի համար դասավանդման և ուսումնառության նյութեր:	2	6
4	Օրվա աշխատանքային պլանի կազմումը կարողությունների ձևավորմանը միտված ուսուցում իրականացնելու համար	Ըստ մշակված ձևաչափի խմբերը կկազմեն օրվա աշխատանքային պլանը: Որպես օրինակ վերցվելու են այն դասերը, որոնց համար կազմվել են դասավանդման և ուսումնառության նյութերը:	-	2
5	Կարողությունների ձևավորմանը միտված ուսումնառության իրականացումը	Դասընթացի մասնակիցներին կներկայացվի կարողությունների ձևավորմանը միտված ուսումնառության իրականացման հիմնական մոտեցումները: Գործնական վարժության միջոցով խմբերը ըստ կազմված պլանի կիրականացնեն փորձնական դաս:	2	8

6	Գնահատման գործընթացներ ըստ ուսումնառության արդյունքների	Ուսանողներին կներկայացվի կարողությունների գնահատման հիմնական մոտեցումները, գնահատման բուն բովանդակությունը և նպատակները		2
	Ընդամենը		8	22